

Թիւ 557  
Փետրուար 25, 1956

Պատուարժան  
Միսական Խորհուրդ  
Ուաշինգթոնի Հայց. Եկեղեցւոյ  
Ուաշինգթոն.

Յարգելի Տիարք.

Առաջնորդի Փոխանորդ Արժանաշնորհ Տ. Վարդան #457.  
Մկրեանի յանձնարարութեամբ այսու կը յայտնենք թէ ստացուած է  
Փետրուար 14 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկագրէիք Միսական  
Ժողովի քուէարկութեան արդիւնքը եւ կը խնդրէիք ստանալ ընտրուած  
անձերուն պաշտօնի հաստատումը:

Հարկ էր որ ձեր սոյն նամակին կցուած ըլլար նաեւ  
եկեղեցւոյդ տարեկան տեղեկագիր-վիճակացոյցը: Փափաքելի է որ Ա-  
ռաջնորդարանի կողմէ նախապէս ձեզի դրկուած հարցարանի օրինակը  
լեցնելով վերադարձնէք առաջին առիթով, որպէսզի Թեմական Խոր-  
հուրդը կարենայ վաւերացնել Միսական Խորհուրդի նոր անդամոց ըն-  
տրութիւնը:

Հաղորդելով զայս առ ի գիտութիւն եւ մաղթելով ձեր  
զործերուն յաջողութիւն.

Մնամ խորին յարգանքօք՝

Սուրէն Մանուէլեան  
Դիւանագիր